

# Մխալներ

Օր 1, 2020

Բարև, հերթական՝ կաշվե պատյանով ու թղթերի հաստ կապոցով մեկ, ով ուղղակի գիրք չի: *Իմ անունը չեմ ասի դեռ, որովհետև նշանակություն չունի, բայց հետո, մի օր, մի տեղ կասեմ անպայման:* Երբ չգիտեմ ինչ անեմ, հիշում եմ տառերը, էն բոլոր տառերը, որոնք տող-տող գրում եմք, ոչ թե էն հնչյունները, որոնք բանաստեղծությունների մեջ ուղղակի կորում են:

Գիտե՞ս՝ ինչու: Որովհետև բառերը հոսում են ու շատ արագ, դու սահում ես դրանց վրայով, ու, ինչքան էլ ճանապարհորդությունը երկար լինի, մի տեղ երևակայությունը թափանցիկ վերջակետ է դնում ու կտրում քեզ լսվող բոլոր հնչյուններից ու դու ցրվում-անէանում ես կողքիդ գոռացող ձայներից ու թեթև սահող հնչյուններից: Դրա համար ես գրել եմ սիրում. որ ինձ չընդհատեն, որ չչեղեն, որ մտքերս չփախչեն կողքիս մտած կատվի ճանկերից, որ ասածս տառերը չանէանան, ու որ հետո հանկարծ չկորցնեմ թելս՝ կծիկի մեջ, ու ժամերով փորձեմ հիշել, իսկ հետո մոռանամ, թե ինչ էի ուզում հիշել:

Ես սիրում եմ քամին. սիրում եմ, որովհետև ինձ դրա անձնությունը, բարակությունն ու շատությունը հանգիստ չի տալիս: Քամին ամբողջովս չի, ուղղակի յուրահատուկ է: Բաց ձեռքերդ ու լողա օդում, պտտվիր ու ինքն էլ քեզ հետ ու քո կողքին կպտտվի, քեզ իր մեջ կառնի ու կփրկի էն բոլոր ձևվածներից, որոնք քո հետ չեն պտտվում, որոնք քեզ իրենց գիրկը չեն ամրում, քո հետ ամեն քարանձավ չեն մտնում, որովհետև չեն կարողանում տձևանալ: Այ, դու կլինես իմ քամին: Ես քեզ քամի կասեմ, ու, քանի որ դա քու անունն է, այսօրվանից՝ Քամի: Մեծատառերով, որ քեզ բոլոր քամիների հետ չչփոթեն:

Գիտե՞ս, քամիները մի հետաքրքիր առանձնահատկություն էլ ունեն. ինչքան էլ հետո պտտվեն ու սահեն՝ երբ դու ես սահում, քեզ հակառակ են սահում, որ հիշեցնեն իրենց գոյության մասին, որ կտրես անցնես իրենց ու քեզ ուժեղ զգաս, որ հետո հետո լիաթոք պտտվեն: Ես ուզում եմ, որ դու էլ, անկախ նրանից, որ ինձ պիտի հասկանաս, որ ինձ պիտի օգնես, աչք չփակես իմ սխալների վրա: **Դրանք կլորների մեջ կառնես, կարմիր կներկես, որ իմանամ, որ հասկանամ, ու ամեն անգամ էջերը թերթելիս անցնեմ դրանց վրայով ու զգամ, որ դեռ կան փոխելու շաա՛տ-շատ բաներ:**

Ես Մարիամն եմ: Հիմա դու ինձ ուրիշ Մարիամների հետ չես ասոցացնի, որովհետև ես քամիների Մարիամն եմ: Եթե միանգամից ասեի անունս, պիտի հիշեիր քեզ ծանոթ ու անծանոթ Մարիամներին, իմ ու իրենց միջև ընդհանրություններ ման գայիր, բայց ես չեմ ուզում, որ բոլոր Մարիամներին մի ամբոխով նայեն ու ամեն մեկին դրանից առանձնացնեն ազգանունով: Դու իմ անունը կարող ես չհիշել, ես դրանից չեմ նեղանա, բայց գրածներս հիշիր, քամիներին հիշիր ու չմոռանաս, որ դրանց սիրում եմ: Մի բան էլ՝ դու էլ ես Քամի, հ՞մ:

Այ հիմա դու ոչ հերթական կաշվե պատյանով ու թղթերի հաստ կապոցով մեկն ես, ոչ էլ ուղղակի քամի: Դու հիմա Քամին ես, ու առանձնանում ես մնացած քամիներից կաշվե պատյանով:



# Քաղաքը, որն էլ իմը չի

Օր 2, 2020

Օրերը փոխվել են մի տեսակ. էլ չեն կարող էստեղ գրել ավտոբուսում լսածս քչփչոցները, մարդկանց մասին հորինածս պատմությունները, չեն կարող գրել անձրևի տակ թրջվելուս մասին, չեն կարող գրել ընկերներիս ու դրսում վազվզող շան մասին: Քաղաքը մի տեսակ պտտվել է, էլ առաջվանը չի:

Մի ժամանակ դրա սրճարանների ջազը բթացնում էր գործարանների աղմուկը, փողոցով վազող մեքենաները իրենց ռիթմն ունեին ու ջազի մի ուրիշ երանգ էին ստեղծում: Կարողանում էիր պարել փողոցում, պտտվել ու քեզ զցել անցորդների մտքերը, մնում էիր այնտեղ, ոնց օծանելիքիդ հոտը: Չէիր վախենում մարդկանցից, անձանոթներին ժպտում էիր, մեկին գուցե գրկեիր, որովհետև էդպես էիր ուզում, մեկի մազերից քաշեիր՝ որովհետև դուրդ շատ են գալիս, ամեն ինչ փչացնեիր ու ծիծաղեիր, ու բոլորն էլ քեզ հետ ծիծաղեին: Պաղպաղակի համն էլ փոխվել է, գիտե՞ս: Ավելի շատ քիմիական միացություն են ներս սահեցնում, քան պաղպաղակ:

Մարդիկ էլ փոխվել են, գիտե՞ս: Միանգամից չէ, կամաց-կամաց ամեն ինչն էլ փոխվեց, ու ես էլ միանգամից չզգացի դա. այ հիմա նայում են հետ, նկարագրում են քաղաքս ու թվում է, թե լրիվ ուրիշ տեղ են արթնացել:

Նայում են շուրջս ու բոլորի գոտկատեղերին մեծ երկաթե շրջանակներ են, որ ուզես էլ, շատ չես մոտենա: Սրճարաններից էլի ջազի էսթետիկ հոտը չի գալիս, մենակ արագ-արագ պատրաստված ու մի քիչ վառված սուրճի հոտը, որ մարդիկ չեն էլ վայելում. դեղի պես կուլ են տալիս ու լքում սրճարանը, որ չհասցնես իրենց մասին պատմություններ հորինել, իրենց շորերը չուսումնասիրես, թաքուն մի-երկու սկետչ չանես, իրենց մասին երազանքներ չհորինես:

Ավտոմեքենաները էլ չեն վազում փողոցում, որովհետև մարդիկ շատ-շատ են ու լցրել են փողոցը, քաղաքը մի տեսակ ծանրացել-կախվել է երկրագնդի մի կողմից ու ուր որ է դրան կհանի հավասարակշռությունից: Նայում են մի մոռացված տան կտուրից ու զգում, որ ոչ մեկի շուրջ էլ չեն կարող պատմություններ հորինել, որ մի տեսակ միագույն են ու գրելիս էլ ամբոխի մասին պիտի գրեն, որ ստեղծում են:

Էն ամբոխի, որ հոսում է՝ չգիտես էլ ուր: Նայում ես, ու բոլորն անկանոն էս կողմից մյուս կողմն են իրենց զցում, խսկվում պատերին, ընկնում հոսքի տակ, տրորվում են, բայց մի բան է դուրս գալիս՝ երբ շարժը դադարում է, **բոլոր անկենդանները գետնից հարություն են առնում ու էլի իրենց պատերին խփում.** էսպես էլ առաջ են գնում, կամ՝ մի տեղ, բայց գնում են: Իսկ ես չեմ գնում: Ես կանգնել եմ ու նայում եմ, իսկ իրենք գլորվում են ժամանակի մեջ. ինձ ժամանակն իր սլաքներից դուրս է չպրտել:

Ես վախենում եմ կտուրներից, դրա համար մենակ գրածներումս եմ դրանց վրա: Ես բարձրությունից չէ, մարդկանցից եմ վախենում, ովքեր պիտի գան ու ինձ նեղացնեն ու հարցաքննեն, թե ինչ եմ էդտեղ անում: Դրա համար չեմ գնում, որ ավելորդ անգամ իրենց չբախվեմ, որ մի նոր ամբոխ չտեսնեմ մի հոգու մեջ: Էլ սրճարան էլ չեմ գնում ու ոչ մի տեղ չեմ գնում. մի տեսակ չեմ էլ ուզում, պակասն էլ չեմ զգում. հակառակը՝ **մի նոր իրականություն եմ փնտրում:**

# Թա՞րս/Գլխիկա՞յր/Թարսուշիտա՞կ

Օր 3, 2020

Բարև, Քամի: Քամիները պակասել են քաղաքից, ու դա զգացվում է: Լավ է, որ քեզ ունեն գոնե: Ես քեզ մի քանի շաբաթով լքել էի, որովհետև ուզում էի հասկանալ ինչ է կատարվում: Հասկանալ էն, ինչ ոչ ոք չի հասկանում: Ասու՞մ էի, չէ՞, որ մարդիկ շատացել են: Բայց փախչողներն էլ են շատացել, մարդիկ փաստորեն ուղղակի աշխատանքի չէին վազում, քաղաքից էին փախչում:

Գիտե՞ս ինչ են կարդացել. լսիր, մի նոր փոխադրամիջոցներ են հայտնվել, տարօրինակ բաներ են, գիտե՞ս: Ոչ մի ֆիզիկայի կանոնի չեն ենթարկվում, ոնց են շարժվում՝ չես էլ հասկանում:

Հրթիռների պես չեն, գիտե՞ս, մի մասը չի պոկվում, որ իրենք հակառակ շարժվեն, ոչ էլ ինքնաթիռների են նման: Ես նույնիսկ չգիտեմ՝ ինչի են նման դրանք, ասում են՝ անտեսանելի են ու դրանց մենակ տերերն են տեսնում: Իրենց էլ թքնում հասցնում են ուրիշ մոլորակներ, պատկերացնու՞մ ես:

Ես էլ կգնայի ուրիշ մոլորակ, բայց մի պայմանով՝ եթե իմ ընտրած մարդկանց հետ գնայի: Լսել եմ՝ շուտով դատարկելու են մոլորակը ու բոլորն ուզած-չուզած լքելու են այն: Ես չեմ ուզում, ես կմնամ էստեղ: Ու ես գիտեմ՝ ուր թաքնվեմ, որ ինձ չգտնեն: Բայց ոչ ոքի չեմ պատմելու, թող բոլորը գնան, ես էստեղ մենակ կմնամ: Իրար հետ էս երեք ամսում կորոշենք՝ ինչ պիտի անենք հետագայում:

Ուրեմն սկզբի համար ասեմ, որ երկար-երկար մազեր եմ ուզում, պիտի որոշենք՝ որտեղ երկարացնել դրանք: Մի քանի համար կֆիքսեմ էստեղ, հետո կորոշենք:

**Մեր հարևաններից մեկը կարող է օգնել մեզ:** Նրա համարը լավ չեմ հիշում, պիտի նայեմ նախկին օրագրերիցս մեկում: Հետո կավելացնեմ էստեղ:

Ահա, գտա 987456390, բայց զանգում եմ՝ պատասխան չկա: **Քաղաքում ամեն ինչն էլ պտտվել:**

Ուշադիր նայիր, այսպիսի մազեր եմ ուզում:



Երկար ու խնամված: Գեղեցիկ նկար է, չէ՞: Արևածաղիկներին նայիր, դրանք միակ բանն են, որ **քաղաքում միշտ նույնը կմնան:**

Դրանց տակ շատ-շատ կարևոր բան է թաքնվել՝ համարձակության **բանալին:** Ինքը չի վախենում բնական լինելուց:

Ինքը նույնիսկ քամիներից չի վախենում ու շատ ուժեղ քամիները նրա համարձակությանը չեն դիպչի. համարձակությունն **արմատներում** է:

# Ռիթիշները

Օր 4, 2020

Քամիի, էստեղ եմ էլի: Այս մի քանի օրում պարզեցի, որ քաղաքի մարդիկ հենց այնպես չեն լքում քաղաքը: Շատ լուրջ պատճառներ կան, ու քանի որ քաղաքում ամեն ինչ **թարու է**, չեմ հասկանում՝ ինչ է կատարվում:

Հավանաբար խնդիրը դեղերի մեջ է: Կապսուլաներ են հայտնվել, որոնք այս տեսքն ունեն



////////// Ցնարդ ջեմ ռենկուղեհ նե, ռենկծ, մակ ըրենշորո  
**Վորեսրահարջ:** Կիցեղեգ նե ու մինակավաբ տաշ  
քնատախշա է ցնարդ արվ մուվրատակ, ըո իվարգ  
ցնակդրամ: Իմ աիրոտարոբալ ալ միյասիտույի  
միոյած, ընունա է, դետդէ մուտախշա նե կիդրամ,  
մու ընույթունքնի յեղ լեգրաա է քտեա. ցյաբ քնարդ իքաղաք  
րոնցալեխ ցիցնակդրամ մուվրեբրատ նե: Քնարն իլեվա  
տիմաջղո նե, ըռաս:

Նրեղեղ ցուլենուղնը ոտեհ կիդրամ ռեբրատնա նե մունռաղ  
նեմա իչնի պեղնահ ու մունա նե իկաշորո նույթուղծորոգ,  
կանիրո՝ ցիրեսեգ ռենկծ, իլեվա ցիքրոխ՝ ռենսրահարջ  
մուարո ու ցնարդ մունցարքոփ-մունցտմ իրենալուսպակ ջեմ:

////

**ԲԲԿԳԳՏԴՂԱԵՆՆԶԶԳԷՍԸԸԿԹԹՈԺԺ ԻԻԷ**

Ես անկեղծ ասած **վախենում** եմ այս ամենից, բայց պիտի մի բան ձեռնարկեմ, թե չէ մարդիկ կլքեն մոլորակը ու այն լրիվ կդատարկվի: Ես չեմ ուզում մենակ մնալ:

Արդեն սկսել են մեզ բոլորիս առանձնացնել, որովհետև մենակ ես չեմ, որ գիտեմ դեղերի մասին ու հրաժարվում եմ դրանք խմել: Եղ պատճառով մեզ արգելում են շփվել միմյանց հետ, ինտերնետն են անջատել նույնիսկ, որ իրարից կապ չունենանք, հեռախոսագանգերը գաղտնալսվում են: Իրականում՝ **ես չեի ուզենա, որ օրագիրս հայտնվեր սխալ մարդկանց** ձեռքերում ու նշումներս **ՈՒՐԻՇՆԵՐԸ** կարդային:

Ախր ինչքան բան կարելի է անել **15 տարեկանում**, իսկ ես ամբողջ օրը տանն եմ փակված: Հազար ու մի բաներից առաջինը մուլտֆիլմեր նայելն է, այ ամենալավերը՝ ջրահարսերի ու դրանց **երկար սիրում պոչիկների** մասին. ես էլ ունենալի այդ պոչիկներից, էլի: Եղ պոչերը տարբեր են լինում, ոմանք նույնիսկ **գործում** են իրենց պոչերը՝ ձիու մազերից, ոմանք լիքը-լիքը մարգարիտներ են հավաքում ու դրանցից էլ գործում, մի խոսքով՝ **ձեռքի տակ եղածից:**



Հ. Գ. Մի քանի ամսաթիվ ուշ

Քամի, ուշադիր եղիր, ինչքան սխալներ եմ արել այս էջում: Ամեն ինչ կարմիր է:

Հ. Գ. 2

**ԶԶՊՍՍԻՀՀՏՅՅԻ ԿԿԹՅՅԱՊՊՔՆՆԱԿՈՈՇՉՉՍ**

# Կոմիքս, որը պիտի կարդաս

Օր 5, 2020

Էս էջը անձրևներից ամենաշատն էր թրջվել ու իրան կարդալ չստացվեց:

Մեր համառ ջանքերի շնորհիվ բացահայտվեց անձրևոտ էջերի գաղտնիքը. ստորև ներկայացնում եմ արդյունքները:


Բարև, Քամի: Էլի, բարև ու հույս ունեմ հարյուր-հազարավոր բարևներ ստիպված չեմ լինի քեզ գրել, ու այս ամենը շուտ կանցնի: Ես կսկսեմ ուղղակի խոսել քեզ հետ, ուղղակի մի թեմայից, ինչ-որ. . .

Վերջերս մի կոմիքս էր ընկել ձեռքս, ու կերպարներից մեկը շատ հետաքրքիրն էր:  
[ Մի էջ կոմիքսից կզոհաբերեմ ]

ՌԻՐԻՇՆԵՐԻՑ շատ եմ լսել կոմիքսի այս հերոսի մասին, նկարն իր կերպարն ամբողջովին չի փոխանցում: Ողջ մարմինը գունաթափ է, ինչ-որ շագանակագույն, որով երեխա ժամանակ հաստատ չէինք ներկի մարմինները: Դեղինով ու նարնջագույնով, թեկուզ վարդագույնով, բայց շագանակագույնով ներկելու երկու բան ունեինք, որոնցից մեկը՝ հողը: Մյուսը սովորաբար չէինք նկարում՝ ամոթ էր:

“Աչքերը թույլ վարդագույն են. այսչափ սպիտակ չեն, ու լույս են տալիս: Բքերը տեսնելու ու աչքերն ուսումնասիրելու համար պիտի նախ արևին նայել սովորես, հետո՝ դրանց. շատ վառ են ու խորհուրդ էլ չի տրվում դրանց նայել: Սպիեր շատ ունի, ատամներն էսպիսին չեն, ուղղակի ատամներ են. ինքը մարդկանց չի ուտում:

Սպիերը հենց նրանից են, որ մարդկանց չի ուտում. իրեն են ուտել սկսել. պատահառտել, ճանկռտել ու մարմինը քերել են սկսել, որովհետև ժամանակին շատ է սխալվել, ասում են: Մեկին է սպանել՝ պատահաբար, չի ուզեցել սպանել, հունից հանել են: Ու էդ օրվանից մարդու կյանքը դժոխքի են վերածել, իրեն էլ սպանել ու քայլող մարմին են դարձրել: Բայց իրեն սովորականի պես չեն սպանել, կյանքն են



սպանել ու ասում են՝ աչքերից էն նույն լույսն է տարածվում, որը ժամանակին էլ լավ փայլում էր, բայց չէր կուրացնում. ընդհակառակը՝ անընդհատ ուզում էիր նայել ու էլի ու էլի. . .

Մարմնի վրա էլ սպիեր կան, մանր էլ կան, մեծ էլ. կեսն ինքն է իրեն խարազանել, կեսն էլ՝ ով հասնի:

# Գրողը

Օր 6, 2020

Էլի բարև, էլ երկար բարևելու ժամանակ չունենմ: Դու Իրեն պիտի ճանաչես, իրոք ճանաչես, ոչ թե նենց, ոնց բոլորն են իր մասին խոսում:

**ԿԿՄՀՀԵ88Զ 330ՀՀԳԿԿՆԼԼՈՒԶԶԹ333ՃՃՈՒԴՂՆ ՍՍԷ ԼԼՊՕՕԵԶԶՏՓՓՔ**

Մի 20-30 տարի առաջ դասախոսներին հանգիստ մարդիկ էին համարում: Ոչ ոքի նրանց կյանքը առանձնապես չէր հետաքրքրում, գործունեությունը՝ ևս: Պայմանականորեն ասենք՝ Ալբերտը, ևս ոչ ոքի հետաքրքիր չէր: Նիհար, մինչև 40 տարեկան երևացող, վրան մեծ կոստյումից բացի ուրիշ հատկանշական առանձնահատկություններ չունեցող մեկն էր: Դասից տուն, տնից դասի, մեկ-մեկ՝ դաս-սրճարան տուն, մեկ-մեկ՝ դաս-սրճարան-դաս, ավելի հաճախ՝ սրճարան-գրադարան-տուն, մեկ-մեկ էլ տանը չէր վերջակետվում. մնում էր մի տեղ՝ ասենք՝ փողոցում, հին մետրոներից մեկի վագոններում, մեկ-մեկ՝ գրադարանում. . .

Ուղղակի տան տեղն էր մոռանում:

Մի անգամ էլ հերթական անգամ ինչ-որ տեղ գիշերելուց հետո գնաց տուն, որովհետև հիշեց տան տեղը, գնաց տուն ու չգնաց դասի: Չգնաց, որովհետև թեյ էր ուզում խմել: Շատ էր ուզում: Շատ թեյ էր ուզում, ու ամբողջ օրն էր ուզում խմել, տանից էր ուզում, ու տանն էլ մնաց: Ու դա ոչինչ ոչ մեկի կյանքում չփոխեց: Իր կյանքում՝ ևս:

Միշտ չէր էդպիսին: Մինչև էդ օրին հասնելը ավելի աչքին հաճելի մեկն էր:

Դրա հաջորդ օրը ուզում էր գնալ ու գնաց դասի: Գնաց ու մտավ լաբորատորիա: Քիմիական մի քանի հետազոտություն ուներ անելու. ցնդածի մեկն էր:

Որ հարցնում էիր կյանքի երազանքը, ասում էր՝ ուզում եմ գրող դառնալ, որ հարցնում էիր՝ ի՞նչ կապ ունեն գրելն ու քիմիան, ասում էր քիմիա սկսել է սովորել, որովհետև մի գիրք կիսատ էր մնացել. մի հարցի տրամաբանական լուծումը գտնել չէր կարողանում, որ հարցնում ես՝ լավ, իսկ դասախոս՞ս ինչու դարձար, ասում էր, թե ոչ մի քիմիկոս, ոչ մի գիրք ու երևակայություն չի գտել իր փնտրած հարցի պատասխանը. հարցն էլ գաղտնի էր պահում, շատ գաղտնի: Ու դրա համար հույս ուներ, որ ուսանողներից մեկը մի օր կգտնի իր ուզած հարցի պատասխանը: Ու շարունակում էր հետազոտությունները:

Ուրեմն. լաբորատորիա: Մտավ, տեսավ որ սուրճի բաժակը կեղտոտ է, տակի հաստ նստվածքը մեջը, զգվեց ու որոշեց էլ սուրճ չխմել: Կոտրեց բաժակը, որ սուրճ խմելու բաժակ չունենա, ստիպված չխմի. կոտրեց, բոլոր կտորները թողեց էդտեղ գետնին թափված ու դուրս եկավ: Դուռն էլ բաց թողեց, բայց միտումնավոր չէ, նույնիսկ միամիտ էլ չէ, որովհետև չէր էլ

պլանավորել այն փակել: Ուղղակի դուռը բաց մնաց: Իր սենյակն էլ համալսարանի նկուղային հարկում էր՝ տառականների ու զգվելի էլի շատ բաների հետ:

# Մոխրագույն Ալբերտը

Օր 7, 2020

Էդ հարկում շատ քամիներ կային, լիքը գաղտնիքներ ու ահավոր շատ պակաս. սիրո: Դրա պատերը կանաչ էին, բայց ոնց պտտվեիր՝ մոխրագույնի հետ էիր համեմատելու էնտեղի հոտերը:

Էդպես մոխրագույն էլ Ալբերտը քայլում էր՝ էդտեղ ու մնացած բոլոր տեղերում:

Բայց լսարանում իրեն սիրում էին, որովհետև ինքն ուղղակի չէր խոսում, խոսում էր էն ամենից, ինչ հուզում էր բոլորին: Ու քննարկում էին իրար հետ ու մի օր ուսանողներից մեկը հարցրեց իր էդտեղ գտնվելու իմաստը: Հարցը հերթականն էր, բայց ինքը որոշեց պատասխանել:

-Ես մի բան եմ փնտրում: Մի բանաձև: Էն նյութերն եմ փնտրում, որոնք կկարողանան օդ ստեղծել, երբ օդ չկա: Մի նյութ, մի դեղ կամ մի սարք: Որ կարողանաս շնչել, երբ օդ չկա:

-Սարքելու՞ եք, որ բանաձևն իմացաք:

-Չէի, - ասաց ու ձեռքերը սահեցրեց մազերի վրայով, որոնք առանց այդ էլ խառնված էին: Հետո հաստ, թավ հոնքերն իրար մոտեցրեց ու ճակատը լրիվ կնճռտվեց:

-Բա ինչի՞ համար եք դա փնտրում:

-Որ հերոսներս փախչեն:

-Ի՞նչ հերոս:

-Գիրք է գրում գիժը,- մի դուրսպրծուկ ցատկեց տեղից, մի ունքը բարձրացրեց ու իր կարծիքով՝ գրավիչ հայացք ընդունեց, քթի տակից ժպտաց, գլուխն իջացրեց մի երևի 45 աստիճան ու դուրս եկավ:

-Լսարանից դուրս սահեց ու, եթե հիմա մեռնի, պիտի ասեն՝ Սահակյանց, քո ժամին է մեռել, - երևակայությունը լարեց Ալբերտը ու նստեց,- էսօր տրամադրություն չունեմ: Ընդհանրապես չունեմ: Ու չեմ խոսելու,-արդեն գիտեին, որ Սահակյանցը, եթե տրամադրություն չունի, ոչ ոքի էլ չի նեղացնի, ուղղակի չի խոսի ու ոչ էլ կլսի, թե ոնց են ուրիշները խոսում:

Ու հաջորդ օրը, երբ Սահակյանցը ներս մտավ, լսարանը ավելի շատ լիքն էր, քան դատարկ:

-Սահակյանց, եթե գտնենք էդ նյութի բանաձևը, կթողնեք սարքենք այն, - տարիքային տարբերությունը մեծ չէր, ու հաճախ Սահակյանցին ուղղակի Ալբերտ էլ էին ասում:



-Ինչի՞ համար:

-Որ փորձարկենք:

-Լավ:

# Բանաձևը

Օր 8, 2020

-Ընկեր Սահակյանց, - ծայն տվեց աղջիկներից մեկը, - իսկ եթե հաջողվի սարքել, ի՞նչ ենք անելու հետո:

-Հետո՞: Հետո՝ ոչինչ: Ուղղակի կսարքենք, կփորձարկենք ու վերջ:

-Ընկեր Սահակյանց, այ ասեք՝ եթե հնարավորություն ունենայիք՝ կփախչեի՞ք ձեր հերոսների հետ:

-Հա:

-Մենք էլ: Ու վստահ ենք՝ շատերը: Գրքի համար էր պետք, չէ՞: Իսկ մտածե՞լ եք գիրքը հրապարակելու մասին:

-Չէ:

-Իսկ եթե հրապարակե՞նք:

-Ու ի՞նչ:

-Բանաձևը հասանելի կլինի բոլորին: Թող բոլորով փախչեն: Ով կուզի: Բոլորին է հոգնացրել կառավարության ճնշման ու քննման տակ ապրելը: Մենք էլ ազատ չենք. մենք պարտավոր ենք, որովհետև հող ունենք, որովհետև արյուն է թափվել, որովհետև Տիգրան Մեծը քրիստոսից կես դար առաջ մեծ Հայաստան էր ստեղծել. . . Թատրոն են բեմադրել ու խաղում են թատրոնը, միայն թե վավերագրական թատրոն, խաղում են մեզնով ու զվարճանում: Քաղաքական հարցեր են, հասկանու՞մ եք: Իհարկե հասկանում եք, մեզնից էլ լավ եք հասկանում: Մեզնից էլ շատ եք ուզում թռչել ուղղակի երկնքով, ոչ թե պարտավորված ապրել:

-Կհրապարակենք:

Ու էդ լսարանից էլ ծայն չլսվեց:

ԱՄԻՍՆԵՐ ԱՆՑ: ՄԱՄՈՒԼ:

-Ինչպես գիտեք՝ շատ երիտասարդներ են սկսել անհետանալ ու նրանց միանում են նաև մեծերը: Մեզ հաջողվել է հասկանալ այս ամենի պատճառը. վերջին ամիսներին մի նոր գիրք է հանվել վաճառքի <<Անթթվածին>> վերնագրով: Դրանում տեղ գտած մի շարք նյութեր հեղինակի կողմից վերնագրվում են որպես բանաձևեր, որոնք, ըստ իր պնդման, ունեն գիտական արժեք: Սակայն օրեր առաջ 24-ամյա երիտասարդի դի է հայտնաբերվել, ով մահվանը նախորդող շաբաթների ընթացքում գիրքը ընթերցելիս է եղել: Տղան թունավորվել է, ու փորձագետները պնդում են, որ նրա արյան մեջ հայտնաբերված թույնի բանաձևը համընկնում է գրքում տեղ գտած բանաձևի հետ:

Քանի որ մենակ հեղինակը չէր կարող այս ամենը ծրագրավորել և իրականացնել երիտասարդների անհետացումը, ոստիկանությունը զբաղվում է նրա համախոհների ինքնությունը պարզելով: **Գրքի վաճառքն արգելված է:**

Մամուլ, կամ «լիքը» բան հեռուստացույցի մեջ

Օր 9, 2020

Մի քանի շաբաթվա ընթացքում Ալբերտին գտան:

**ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ: ՄԱՍՈՒԼ:**

Երկրին, ու կարծում ենք, շուտով ողջ երկրագնդին շատ լուրջ վտանգ կսպառնա: Գրքի վաճառքն արգելված է, բայց այն շարունակում են բազմացնել և տարածել, ինչի հետևանքով մարդիկ անհետանում են: Բժիշկները գտել են հակաթույնը, գնեք դա և ընդունեք, որովհետև թույնը ձեզ վրա կարող է ազդել՝ նույնիսկ եթե այն չեք օգտագործել: Դրանցից դեռ քիչ կա վաճառքում, բայց շուտով հասանելի կլինի բոլորին: Որոշների համար՝ անվճար: Այդ խմբի մեջ են մտնում տարեցները, միայնակ. . . — ու հեռուստացույցի ձայնը կամաց իջավ:

—Խեղճ մարդ, ինչու՞մ են մեղադրում,-լսվեց բնակարաններից մեկում:

Եվս մի քանի շաբաթ ու իրավիճակը աշխարհում անվերահսկելի էր: Մարդիկ վերածվել էին այն ամենին, ինչի մասին պատմում էի սկզբում: <<Հակաթույնն>> էր էդպիսի ազդեցություն թողել: Մնացածը ոնց կարողանում էին, օգտվում էին բանաձևից ու փախչում:

**ՄԱՍՈՒԼ:**

Ինչպես գիտեք, մոլորակում տիրող իրավիճակի միակ պատասխանատուն Ալբերտ Սահակյանցն է, ով առաջին հայացքից անվտանգ դասախոս էր: Մնացեք տանը. փրկենք մոլորակը:

**ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

Այսօրվանից կվերահսկվեն բոլորը՝ ապատեղեկատվություն ու վտանգ տարածելուց խուսափելու համար, ինտերնետ կապը չի գործի, հեռախոսները չեն գործի, նորությունները կարող եք ստանալ հեռուստացույցից: Հեռուստաթերում հեռարձակվող բոլոր ֆիլմերը, մուլֆիլմերն ու հաղորդումները վերահսկվում են:

Խստացվում են դասախոսների ու մնացած բոլոր դասավանդողների իրավունքները, քանի որ նրանք անմիջական կապ ունեն դեռահասների ու երիտասարդների հետ, ովքեր ի վիճակի չեն սթափ որոշումներ կայացնելու, իսկ նրանց սխալները կարող են ճակատագրական դառնալ մոլորակի համար:

**ՀԱԶՈՐԴԻՎ՝ «Ջրահարսների գաղտնիքները»:** Մնացեք տանը և անցկացրեք լավ ու անվտանգ ժամանակ մեզ հետ:

Իրականում ամեն ինչ բարդում են Սահակյանցի վրա, ասում են թե ամեն ինչի ետևում հենց նա է կանգնած, նրան էլ անընդհատ վնասում են՝ ոնց կարող են, թե՛ սովորական մարդիկ, ովքեր հավատում են, որ ամեն ինչի ետևում նա է կանգնած, թե՛ կառավարությունը:

Սահակյանցի մազերն էլ երկարել են, մի **վարսահարդար** չունի, որ կտրի:

Բայց Սահակյանցը ամեն ինչից շատ հենց մագերին է ուշադրություն դարձնում: **Ամեն վարսահարդարի մոտ չի գնա: ”**



## Ջրահարսեր

Օր 10, 2020

Եսքանը կոմիքսից:

Մտածում եմ՝ կոմիքսում ասեին գրքի միջի եղած բանաձևը. ես կվերցնեի ու կանհետանայի:

Լավ, անցնենք իրականություն:

Քանի որ տանն անելու ոչինչ չկա, **ծեռքի տակ եղածից** մի բան պիտի սարքեմ, որ ձանձրույթից չմեռնեմ:

Ես էլի եկա: Արդեն երեկո է: Դե, ասում եմ, չէ՞, **կոմիքսի պես**, մենք էլ տանն ենք փակված, ու ես որոշեցի մի բան ստեղծագործել, հակառակ դեպքում պիտի թողնեմ ժամանակը կուլ տա ինձ, իսկ ես չեմ ուզում:

Ես այ սենց ջուրը կուլ տալ եմ ուզում, որ ես ջուրը կուլ տամ, ջուրն` ինձ, ու էսպես հավերժանանք, որովհետև հավերժը **չի մեռնում**:

Ու, եթե երազանքներից խոսենք, մանավանդ էն երազանքներից, որոնք **հնարավոր չի** ի կատար ածել, ես սիրում եմ դրանք որոշ չափով իրական դարձնել: Ու եթե ես ջրահարս միևնույն է **չեմ դառնալու**, ուրեմն թող գոնե դրա պոչն ունենամ: Ուղղակի` պատիցս կախեմ, կամ մի տեղ դնեմ:

Բայց ամեն խանութում ջրահարսի պոչ չես գտնի, ուստի ինքդ պիտի երևակայես ու դրան նյութականացնես: Ես դրա համար պետք է գնամ անտառ ու մի քանի անհրաժեշտ իր հավաքեմ ու գամ` կպատմեմ:

## Հանձարեղ բաղադրատոմսեր

Օր 11, 2020

Բարև: Ես էլի էստեղ եմ: Ուրեմն` ամեն հանձարեղ բան պիտի մի տեղ ամրագրվի, որ չկորի: Ուրեմն ես էլ պիտի ամրագրեմ մի ջրահարսի պոչ սարքելու ձևը:

Ուրեմն, մեզ պետք կգա երևակայություն, որ պատկերացնենք, ու հավես, որ վայելենք: Պետք է գնալ անտառ. ամենահարմարն ու ապահովը, ինչից կարելի է գործել, եգիպտացորենի տերևներն են: Պետք է դրանցից հավաքել. ամեն անտառում չի լինում, հա՛,



ուշադիր կլինես կողքերդ, որ ճիշտ անտառ գտնես: Կամ գոնե մոտ: Եգիպտացորենի տերևները պետք է էսպես հյուսել:



Հետո ստացվածներն իրար մեջ հյուսել, մինչև կստանաս առաջին դետալը, որը ոտքերի հատվածն է, դրանից երկու հատ է պետք՝ առջևի ու հետևի համար: Պետք է ուշադիր լինել, որ այն ամբողջ ոտքերի երկարությունից 5-7 սմ երկար լինի, որովհետև ոտքերը ծալելու տեղ պետք է ունենան: Հետևի շաբլոնն ավելի լայն ու ուռուցիկ է պետք գործել:

Հետո հարկավոր է ներքևի մասը գործել, որն էլ հիմնական գործառույթը պիտի կատարի. դա պետք է երկար լինի, որ ուժը հերիքի ջրի մեջ շարժվելու ու թափ հավաքելու համար: Ու թեթև պիտի լինի, որ սահի ջրի մեջ: Դրա համար կարելի է օգտագործել ձիու, կամ մարդու երկար մազեր, միայն թե մարդու

դեպքում դրանք պետք է լավ խնամված լինեն: Պետք է մի պոչ կապել ու բաժանել երկու մասի: Երկու մասերն առանձին ձվով մշակել ու պոչի տեսք տալ դրանց: Կարևոր է, որ դրանց վերևի հատվածը չլինի շատ առանձնացած. մշակելիս զգույշ է պետք լինել:

Դրա ներսից վազելին է պետք քսել, որ մարմնին դիպելիս կոշտուկներ չառաջացնի, իսկ արդեն երեսը ինչից ուզես, կարող ես սարքել:

Կարելի է ձկան թել վերցնել ու ուլունքներ, միայն թե հաստը, որ ջրի մեջ չքայքայվեն դրանք: Կարելի է մարգարիտներ հավաքել ու դրանք ամրացնել վրան, միայն թե ամուր, որ ջրի մեջ չընկնեն վրայից: Մարգարիտները բնական են ու հենց ջրերում էլ ապրում են, ուստի ավելի լավ կլինի դրանք օգտագործել, որ ջրի կենդանիների համար օտարության զգացում չառաջանա:

Օր 12, 2020

## Մարիամը գնում է՝

Ողջուտույն: Ուրախ եմ այսօր: Վերջապես **կարող եմ փախչել** այս ճահճից:

Ինձ հետ կտանեն նաև **կոմիքսս ու դրա հերոսներին**: Քեզ կխնդրեի գտնեիր Ալբերտի վարսահարդարին ու գայիր մեզ օգնության: Լաաաավ, կատակների ժամանակը չէ. . .

Մի քանի ցուցում եմ ուզում տալ:

Ուշադիր եղիր մեջիդ սխալներին, որ դրանք հանկարծ չԿՐԿՆԵՍ: Սխալները նրա համար են, որ դրանց վրա սովորես ու ես վստահ եմ, որ տարիներ հետո ինձ իմ նշումները պետք կգան:

Եթե չես մոռացել՝ ես Մարիամն եմ, քամիների Մարիամը ու գնում եմ քամիներիս ետևից. . . .

Փ թծ փթ էծ է էջ է էթ //ՃՃէ//

## Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Զ Դ Ը Ա Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Յ ՈՒ Փ Ք Լ Օ Ֆ

Շնորհակալություն էս բոլոր տառերին, որ դրանք ինձ օգնեցին օրագրիս փոխանցեմ էն ամենը, ինչը չպիտի ուղղակի կորեր, Մեսրոպյան 36 ու ոչ ամբողջովին Մեսրոպյան 39 տառերն ինձ օգնեցին, որ ես գաղտնագրեմ խոսքս, չէ՞ որ տառերն էլ մի ժամանակ գաղտնագրեր էին, ու բոլոր նրանց համար, ովքեր դրանցով օգտվել չգիտեն, տառերը գաղտնագրեր էլ մնում են:

Շնորհակալություն, որ դու կաս ու ես լիովին վստահում եմ քեզ, **համակարգչով** գրելու դեպքում ո՞վ գիտի՝ նամակներս գաղտնի են մնում, թե՛ ոչ:

Չմոռանաս, որ երկրագնդում ամեն ինչ պտտվել է՝, քեզ բարի ժամանց անձրևների հետ, իմ Քամի՛. . .

*Էստեղ ավարտվում են Մարիամի օրագրային գրառումները: Մարիամն իրականում կոմիքս չէր պատմում, այլ խոսում էր էն ամենից, ինչ կատարվում էր քաղաքում: Մարիամն իրականում Թամարն էր, ով իր անունը գաղտնագրել է այբուբենի մեջ՝ դրանց տակ ընդգծելով, ա-ն մուգ է դարձրել, որովհետև երկու անգամ է օգտագործվում: Թամարը գաղտնի գործակալ էր, ում խնդիրն էր պարզել, թե ինչ է կատարվում քաղաքում, բայց քանի որ քաղաքում ինտերնետ ու կապի միջոց չկար, նա չի կարողանում կապ հաստատել մնացածի հետ ու սկսում է օրագրային գրառումներ կատարել՝ հույս ունենալով, որ իր ետևից վաղ թե ուշ կգան: Ու հուշումներ է թողնում օրագրում: Մենք էլ գտնում ենք էդ հուշումները:*

Ստորև ամենակարևոր փաստերը.

1. Օրագրում կարմիրով ընդգծվածներն ամենևին սխալներ չեն: Դրանց պետք է մի փոքր ավելի ուշադրություն դարձնել:
2. Վարսահարդար-հարևանը, ով իրականում հոգեբան էր, պետք է օգներ Ալբերտին. գործակալները նախ նրա հետ կապ պիտի հաստատեին
3. Հեռախոսահամարը պետք է կարդալ աջից ձախ
4. Արևածաղիկների արմատների մեջ պետք է գտնել մի թուղթ, որի վրա Մարիամը, էսս դեպքում՝ Թամարը, լիմոնով ինչ-որ բան է գրել, իսկ թե ինչ՝ կիմանաք, եթե գտնեք :-)
5. <Ուրիշները> վերնագրի տակ կան անհասկանալի գրված տառեր: Բառերն ուղղակի ձախից աջ պետք է կարդալ:
6. ԲԲՎԳԳՏ. . . նման գաղտնագրերում պետք է կարդալ ամեն երրորդ տառը
7. Գրքի վաճառքն արգելված է, բայց բանաձևը, որ մի բան տաքացնեք՝ գուցե գտնեք:

8. Ձեզ էլ պոչեր պետք կգան, հարգելի գործակալներ, որ մտներ գետն ու գտներ նրանց:  
ԱԱԱԱ, մոռացել էի, շնչել չեք կարողանա~~~~~ . . . . .